

ՏԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

ԵՐՎԱՆԻ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ


(Ծննդյան 90-ամյակի առթիվ)

Ա. Ն. ՍՐԱՊՅԱՆ

Արթուն միտք, պայծառ հիշողություն, առողջ դատողություն, աշխատանքային եռանդ — ահա ինչն է բնորոշ իր կյանքի 90 և հայագիտական-մանկավարժական գործունեության 70 տարին վերջերս բոլորած գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Երվանդ Գալուստի Տեր-Մինասյանին:

Նա ծնվել է Արթիկի շրջանի Հառիճ գյուղում, 1879 թ. նոյեմբերի 7 (19)-ին: Սկզբնական կրթությունն ստացել է Հառիճի վանքի դպրոցում, որտեղ ուսուցիչ էր նաև նրա հայրը՝ տեր Գալուստը: Սակայն երկդասյան դպրոցում ստացած տարրական կրթությունը չի գոհացնում նրան ու ծնողներին: Շուտով փոքրիկ Երվանդը Հառիճից սովորելու է մեկնում էջմիածին, դառնում սանր Գևորգյան ճեմարանի, որն իր ժամանակի հայագիտության հիմնական օջախներից մեկն էր: Նրա սեմից դուրս էին եկել հայ մշակույթի ու պատմության բազում մեծագործ դեմքեր, որոնցից շատերին աշակերտելու երջանկությունն ունեցավ Երվանդ Տեր-Մինասյանը: Նա սնվեց ու հասակ առավ գիտության ու արվեստի հռչակավոր ուսուցչապետեր Մ. Աբեղյանի, Ստ. Կանայանի, Հ. Մանանդյանի, Հր. Աճառյանի, Կ. Տեր-Մկրտչյանի, Գ. Հովսեփյանի, Հ. Հովհաննիսյանի, Կոմիտասի (Ս. Սողոմոնյան) ձեռքի տակ: Անշուշտ նրանց վաստակն էր նաև, որ իրենց սանը 1900 թ. ճեմարանի լրիվ դասընթացներն ավարտեց գերազանց գիպլոմով: Ավարտական շարադրանքը՝ «Հաղբատ և Սանուհին վանքերը», անմիջապես արժանացավ ուշադրության և տպագրվեց «Արարատ» ամսագրի 1901 թ. համարներում (մայիս-օգոստոս):

Գիտության իր ընտրած բնագավառում խորանալու տենչն է, որ Երվանդ Տեր-Մինասյանին նույն այդ թվականներին տանում է Գերմանիա, ուր նա շորս տարի (1901—1904 թթ.) ուսանում է Լայպցիգի ու Բեռլինի համալսա-



րաններում: Այստեղ Տեր-Մինասյանը բախտ է ունենում ունկնդրել աշխարհահոշակ գիտնականների՝ Հառնակ, Հաուկ, Յիմմերն, Վունդտ, Լամպրեխտ, էրման, Զախաու և ուրիշներ: Գերմանիայի համալսարաններում նա ուսումնասիրում է փիլիսոփայական, բանասիրական ու պատմական գիտություններ, արևելագիտական առարկաներ՝ եբրայական, ասորական լեզուներ և գրականություն, քրիստոնեական եկեղեցու պատմություն և այլն: Հիմնովին տիրապետում է նաև եվրոպական որոշ լեզուների, մասնավորապես գերմաներենի, որով և նա զրուցում է իր դիսերտացիան. „Die Armenische Kirche in ihren Beziehungen zu den Syrischen Kirchen bis zum Ende des sechsten Jahrhunderts“.

Հանձնած լինելով նաև փիլիսոփայության դոկտորի աստիճան ստանալու համար սահմանված քննությունները փիլիսոփա Վունդտին, արևելագետ Յիմմերնին և պատմաբան Վաքսմութին, Երվանդ Տեր-Մինասյանն արժանանում է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի առաջին կարգի դիպլոմի: Հայ-ասորական եկեղեցիների փոխհարաբերությանը նվիրված նրա վերոհիշյալ դիսերտացիոն աշխատանքը գիտական աշխարհը բարձր է գնահատում: Աշխատությունն ամբողջությամբ հրապարակվում է Բեռլինի գիտությունների ակադեմիայի այն ժողովածուի մեջ, որ կոչվում էր „Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur“, Հառնակի և Գերհարդտի խմբագրությամբ:

Գերմանիայից հայրենիք վերադառնալով, Երվանդ Տեր-Մինասյանն աշխատանքի է անցնում իր իսկ ավարտած Գևորգյան ճեմարանում: Այստեղ նա չորս տարի ավանդում է հին ու միջին դարերի փիլիսոփայության պատմություն, եկեղեցու և կրոնների պատմություն, գերմաներեն, միաժամանակ վարում էջմիածնի տպարանի վարիչի պաշտոնը. սակայն, որ ամենակարևորն է, նա երբեք չի ընդհատում իր գիտական ուսումնասիրությունները, որոնք հաջորդաբար տպագրվում են Գերմանիայում՝ գերմաներեն, դարձյալ Ադոլֆ Հառնակի խմբագրությամբ, ինչպես նաև Հայաստանում՝ հայերեն, էջմիածնի պաշտոնական ամսագրի՝ «Արարատի» էջերում: Վերջինիս մեջ լույս ընծայված մի հոդվածը՝ «Հայոց եկեղեցու վերանորոգության խնդիրը» վերնագրով («Արարատ», 1908, հոկտեմբեր, էջ 872—887), բախտորոշ նշանակություն է ունենում հեղինակի համար. մասնագետի առողջ գիտական միտքն ու այդ տարիների վանական պահպանողական-կրոնական միջավայրը ներհակ են գտնվում, և 1910 թ. սկզբներին Երվանդ Տեր-Մինասյանը վճռականապես հրաժարվում է իր հոգևոր կոչումից, անվերադարձ հեռանում վանքից. նա մեկընդմիջտ նվիրվում է գիտական, ուսուցչական աշխատանքի Երևանում, Լենինականում, Վաղարշապատում, Թիֆլիսում և այլուր:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց զրեթե անմիջապես հետո՝ 1921 թ. փետրվարին, երբ հիմնվում է էջմիածնի «Կուլտուր-պատմական» ինստիտուտը, որ հետագայում վերակոչվում է «Հայաստանի գիտական ինստիտուտ», Տեր-Մինասյանը դառնում է նրա առաջին գիտնական քարտուղարը: Նա առաջատար դեր է կատարում իրականացնելու Հայաստանի անդրանիկ պետական գիտական հաստատության նպատակները՝ գիտական հիմքերի վրա դնելու հայ մշակույթի ուսումնասիրության գործը և մասսաների սեփականությունը դարձնելու հին մատենագրության հուշարձանները: Նա պատրաստում է ինստիտուտի կանոնադրության նախագիծը, ձեռնարկում կարգավորելու և ցու-

ցակազորելու ձեռագրերը, արխիվը, մամուլը։ Արդեն հարուստ փորձի ու վաստակի տեր գիտնականը մեծ ջանքեր է թափում բավականին ծանր պայմաններում իրագործելու նաև պարբերական հանդեսի ստեղծումը, որ պիտի գիտական ուսումնասիրության ենթարկեր Հայաստանի աշխարհագրությունն ու ազգագրությունը, տնտեսական կացությունն ու հարաբերությունները, պատմությունն ու գրականությունը, հնագիտությունն ու արվեստը։ Հանդեսն անվանվում է «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» և իր շուրջն է համախմբում հայ գիտության լավագույն մշակներին։ «Բանբերի» անդրանիկ համարը՝ Ա և Բ՝ գրքերը միասին, լույս է ընծայվում ինստիտուտի գիտնական քարտուղար Երվանդ Տեր-Մինասյանի խմբագրությամբ, 1921—1922 թթ., որով մի լուրջ ու կարևոր գործի հիմն է դրվում Հայաստանում։ Հետագայում ևս Երվանդ Տեր-Մինասյանը պաշտոններ է վարում այլ ուսումնական հաստատություններում, լինում դպրոցների վարիչ, ինստիտուտի սեկտորի վարիչ, գիտնական քարտուղար, համալսարանի ամբիոնի վարիչ և այլն։ Եռանդաշատ գիտնականն ու մանկավարժ գործիչն այդ աշխատանքներին զուգակցում է համակողմանիորեն զարգացած իր իմացություններն ու կարողությունը, կատարելով խմբագրական, ռճաբանական, թարգմանչական, լեզվագիտական, բառարանագիտական-բառարանագրական, տերմինաբանական գործեր։ Այս ամենը հայ մշակույթի անխոնջ հետախույզին պսակում են նոր փառքով. 1943 թ. նրան տրվում է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան՝ առանց գիտերտացիայի պաշտպանության, իսկ 1945 թ.՝ պրոֆեսորի կոչում։ Այսպես Տեր-Մինասյանն ստանում է նաև մեդալ, շնորհակալագրեր ու պարգևներ։ Հետագայում ըստ արժանիույն են զնահատվում բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆ. Երվանդ Տեր-Մինասյանի ծառայությունները հայագիտության, բառարանագրության և թարգմանչական արվեստի բնագավառներում, և նրան շնորհվում է Հայկ. ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

* * *

Հենսագրական այս տեղեկություններից իսկ երևում է, թե որքան բազմակողմանի ու լուրջ են Երվանդ Տեր-Մինասյանի նախասիրությունները, որքան կարևոր հայագիտության զարգացման համար նրա ընտրած բնագավառները՝ պատմություն, բանասիրություն, փիլիսոփայություն, եկեղեցիների և կրոնների պատմություն, աղբյուրագիտություն, բառարանագիտություն, թարգմանություն և այլն։

Վաստակաշատ գիտնականը հայ մշակույթի զանձարանն է մուծում հայագիտության բոլոր կարևոր ճյուղերին վերաբերող 130-ից ավելի արժեքավոր հետազոտություն (մենագրություններ և հոդվածներ), որոնց թիվն այսօր էլ շարունակում է աճել։

Դեռ երիտասարդ հասակում Տեր-Մինասյանը հրապարակ է հանում այնպիսի մի լուրջ աշխատություն, որ առ այսօր մնում է միակն ու լավագույնը։ Սրա գերմաներեն տպագրության մասին առիթ ունեցանք խոսելու փոքր-ինչ առաջ։ Աշխատությունը լույս է ընծայվում նաև հայերեն 1908 թ., մեծ չափերով բարեփոխված ու լրացված¹։ Այս գրքով հեղինակը միանգամից ոտք է դրել

¹ Տե՛ս «Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցիների հետ», հայկական և ասորական աղբյուրների համաձայն ուսումնասիրեց Երվանդ Տեր-Մինասյանց, էջմիածին, 1908։

հայ մշակույթի պատմության ուսումնասիրության մի նոր, չհետազոտված ու կարևոր ասպարեզ, հմտորեն օգտագործել թե՛ հայկական և թե՛ ասորական սկզբնաղբյուրներ:

Հայ և ասորական եկեղեցիների հարաբերությունները բացահայտող աշխատության հեղինակը հետազոտել է երկու ժողովուրդների փոխադարձ ազդեցությունները՝ որքան կարելի է վաղ՝ հնագույն ժամանակներից սկսած (Քաղկեդոնի ժողովից դեռևս շատ տարիներ առաջ), հասել մինչև XIII դարի վերջին քառորդը: Մասնագետը համակողմանիորեն ընդգրկել է հայոց եկեղեցու սկզնավորության, Հայաստանի համար քրիստոնեության առաջին քարոզչական կենտրոնների, եկեղեցական ժողովների (Քաղկեդոնի, Դվինի, Պարսից, Մանազկերտի) հետ կապված բոլոր հանգուցային խնդիրները, ցույց տվել հայոց եկեղեցու պատմական, դավանաբանական դարգացման ընթացքը, ինչպես նաև կարելիվույն չափ լիակատար օգտագործել ասորիների պատմական գրականությունը: Աշխատության նշանակությունը կրկնապատկվում է նրանով, որ հայ-ասորական եկեղեցիների հարաբերության այդ ժամանակաշրջանն ընդգրկում է մեր գրավոր մշակույթի ու լեզվի պատմության հին դարերի բազմաթիվ կարևոր հարցեր: Այստեղ քննվում են հայոց տառերի գյուտը, թարգմանչաց դպրոցի գործունեությունը, Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և այլոց դերը, պատմիչների գործերը, արվում համարձակ, ինքնատիպ ու հիմնավոր եզրահանգումներ:

Հայ-ասորական փոխհարաբերությունների պատկերն էլ ավելի է հարստանում հմուտ հայագետ-ասորագետի առանձին հետազոտություններով, որոնք հրատարակվում են թե՛ մինչ այդ գործը և թե՛ դրանից հետո: Թվենք դրանցից «Մանազկերտի 726-ի ժողովի ասորի եպիսկոպոսները և խոսրովիկ թարգմանչի հիշած երկու ասորական վանքերը» («Արարատ», 1907, հունվար, էջ 75—80), «Այսպես կոչված Պարսից ժողովը» («Արարատ», 1907, փետրվար, էջ 179—195), «Բաբգեն կաթողիկոսի ժողովի թվականը և տեղը» («Արարատ», 1908, հուլիս-օգոստոս, էջ 691—707), «Աբրահամ խոստովանողի «Վկայք Արևելից»-ը և նրա ասորական սկզբնատիպը» («Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, էջմիածին, 1921—1922, էջ 114—126), «Նեստորականությունը Հայաստանում V—VI դարերում» («Գրական-բանասիրական հետախուզումներ», 1, Հայկ. ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան դրականության ինստիտուտի հրատ., Երևան, 1946, էջ 175—242) և այլն:

Հայագիտության դարգացման գործում Երվանդ Տեր-Մինասյանի հաջորդ խոշոր ներդրումները աղբյուրագիտական-բնադրագիտական են: Մեծ գնահատանքի են արժանացել նրա հատկապես հին բնագրերի գիտական հրատարակությունները: Հայտնի է, որ հայկական ձեռագրերի միջոցով փրկվել են հին աշխարհի այնպիսի երկեր, որոնց բնագրերն անհետացել են: Այս իմաստով էլ կապիտալ արժեքներ են (ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ քաղաքակիրթ մարդկության համար) հունարենը կորած հին հայերեն թարգմանությունները, որ մեր ձեռագրերից հայտնաբերեցին ու հմտորեն հրատարակեցին Երվանդ Տեր-Մինասյանն ու Կարապետ Տեր-Մկրտչյանը: Դրանցից են երկրորդ դարի նշանավոր մտածող Բրենիոսի «Ցույցք առաքելական քարոզութեանն» երկը, որի միայն վերնագիրն է պահպանվել մատենագիրների գործերում: Բնագրի մեզ հասած հին հայերեն լրիվ թարգմանությունը երկու գիտնականները

լույս ընծայեցին համառոտ ջանքերով՝ հայերեն ու գերմաներեն, պրոֆ. Ադուլֆ Հառնակի առաջաբանով և խմբագրությամբ, որ հետո ունեցավ ուսերեն թարգմանություն և գերմաներեն՝ վերահրատարակություն: Նույն հեղինակի «Ընդդէմ հերձուածոց» երկը (Դ և Ե գիրք) հրատարակեց Տեր-Մինասյանը միայնակ, հայերեն, իսկ Տիմոթեոս Կուղի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» գործը նույնպես հայերեն և Կարապետ Տեր-Մկրտչյանի համագործակցությամբ: Այս երկերի պահպանված հայերեն թարգմանությունները (Տիմոթեոս Կուղինը՝ նաև ասորերենը) ստանում են բնագրի արժեք, դրանց հունարեն բնագրի չգոյության հետևանքով: Սակայն միայն դրանում չէ նրանց կարևորությունը: Այդ թարգմանություններն, ըստ էության, ստանում են բազմակի արժեք. նախ, ինչպես արդեն ասվեց, որպես կորած բնագրերի վերագտնում կամ վերականգնում. երկրորդ՝ որպես հունարենից կատարված հին թարգմանություններ՝ հայոց լեզվի պատմությունն ուսումնասիրելու համար. երրորդ՝ որպես կարևոր աղբյուրներ՝ հունաբան դպրոցի ժամանակն ու էությունը բնորոշելու առումով. չորրորդ՝ որպես հին Հայաստանի փիլիսոփայական մտքի պատմության հետ առնչվող երկասիրություններ:

Տիմոթեոս Կուղի հայերեն բնագրի հրատարակման այս գործին հետագայում Տեր-Մինասյանն ավելացրեց մասնագետի իր իմացության խորությունն ու հմտությունը մեկ անգամ ևս փայլուն կերպով դրսևորող հետազոտություն՝ նվիրված հեղինակի վերոհիշյալ երկի հայերեն թարգմանության ժամանակը «որոշելուն: Աշխատանքը՝ «Տիմոթեոս Կուղի» Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» երկի թարգմանության ժամանակը» խորագրով, լույս ընծայվեց Մատենադարանի «Բանբերում» (№ 5, 1960, էջ 279—291) և գիտական հասարակության հատուկ գնահատանքին արժանացավ: Տիմոթեոս Կուղով զբաղվող հայ և օտար մասնագետներն այնուհետև անկարող եղան չանդրադառնալ Երվանդ Տեր-Մինասյանի հայտնություններին:

Այս էր հայագետ-ասորագետ-հունագետ գիտնականի տարերքը, որին գումարվեց V դարի նշանավոր հայ պատմիչ Եղիշեի Վարդանանց պատմության համեմատական բնագրի պատրաստումը: Գիտական աշխարհն առանձնապես նշեց գրաբար քննական հրատարակության բարձր արժանիքները և իրավացիորեն համարեց բնագրերի հրատարակության դասական ավանդույթներով ստեղծված «Պատմագիրք հայոց» շարքի գոհարներից մեկը:

Վաղուց էր Վարդանանց հերոսամարտի պատմիչը գրավել գիտնականի ուշադրությունը, որ նախապես արտահայտվել էր գործի աշխարհաբար թարգմանությամբ և հայ ժողովրդական ավելի լայն մասսաների սեփականությունը դարձնելու մտահոգությամբ: Գիրքը թարգմանվել է վարժ ու հմուտ հայերենով, ծավալուն առաջաբանով և ընդարձակ բանասիրական ծանոթագրություններով²:

Պետք է նշել, որ այս երկասիրությունները, բնագրագիտական-աղբյուրագիտական մեծ արժեք ներկայացնելու հետ մեկտեղ, շատ կարևոր են գրականության, բանասիրության, լեզվի պատմության և հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար ևս: Դրանց առաջաբաններում ու ծանոթա-

² Տե՛ս «Եղիշեի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լույս ածեալ բաղդատութեամբ Լեոագրաց, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեանի», Երևան, 1957:

³ «Եղիշեի Վարդանանց պատմությունը», թարգմանությամբ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1946:

գրություններում արժարժված խնդիրները հեղինակին մշտապես հետաքրքրող ու զբաղեցնող հարցեր էին, որ չէին սահմանափակվում միայն Եղիշեով ու նրա Պատմությամբ,⁴ այլ ծավալվում էին ավելի լայն շրջանակներով, ընդգրկում հայ հին գրականության զանազան հատվածներ, ամբողջանում ու հարստանում շատ հետազոտություններով՝ սկսած հեղինակի առաջին շրջանի գործերից մինչև վերջինները: Հիշենք «Մովսես Խորենացու քաղկեդոնական լինելու առասպելի շուրջը» աշխատությունը («Տեղեկագիր» ՍՍՀՄ ԳԱ հայկ. ֆիլիալի (հաս. գիտ.), Երևան, 1943, № 2, էջ 55—80), «Հինգերորդ դարի հայ գրականությունը» (Երևան, 1946), «Ե. դարի հայ եկեղեցու պատմության և դրականության մի քանի հանգուցային հարցերի շուրջը» («Էջմիածին», 1962, № № 5—6, էջ 40—44, 45—55), «Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին» («Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 25—48) գործերը: Պետք է հատկապես ընդգծել, որ վաստակաշատ հայագետին է պատկանում հայոց գրերի գյուտի թվականը վերջնականապես ճշտելու պատիվը:

Սրան անհրաժեշտ է ավելացնել Տեր-Մինասյանի բանասեր-բնագրագետի հմտությամբ բանավիճելու մեծ ընդունակությունն ու արվեստն ընդհանրապես, որ արդարացիորեն ու նույն սրությամբ արտահայտվեց ընդդեմ Ստ. Մալխասյանի՝ Մովսես Խորենացուն քաղկեդոնիկ համարելու առիթով, ընդդեմ Ն. Ակինյանի՝ Եղիշեի Պատմության ժամանակը որոշելու հարցում, ընդդեմ Ն. Տեր-Մկրտչյանի՝ հայերի միաբնակության էությունը պարզելու խնդրում:

Հետաքրքիր է նշել նաև, որ հենց այժմ էլ հայագետն զբաղվում է V դարի հայ պատմության, գրականության ու նրա սկզբնավորման հետ կապված հետախուզումներով: Միայն վերջերս նա ավարտեց ու տպագրության հանձնեց «Հայոց գրականության ծագումն ու զարգացումը սկզբից մինչև իններորդ դարը» և «Հայոց եկեղեցու ծագումն ու զարգացումը և դավանաբանական դիրքը» խորագրերով աշխատասիրությունները՝ շարադրված «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի համար:

Ընդամենը մեկ տարի առաջ՝ 1968 թ. լույս ընծայվեց հետազոտության կարոտ ու բարդ մի բնագավառի՝ միջնադարյան աղանդների մասին նրա խորիմաց ու ծանրակշիռ աշխատությունը⁵, որ չափազանց կարևոր է հայ հասարակական մտքի պատմության ուսումնասիրության համար:

Հայտնի է, թե աղանդավորների ու աղանդավորական շարժումների մասին որքան խառնաշփոթ ու հակասական են տեղեկությունները, և որքան պակաս հավաստի աբյուրները, ըստ այդմ էլ որքան դժվար ճշգրիտ եզրակացությունների հանգելը՝ գլխավորապես քրիստոնեական եկեղեցու աղանդահալած ներկայացուցիչների գրվածքների հիման վրա, որոնք չէին կարող անաչառ լինել:

Աղանդավորական շարժումները չափազանց բարդ երևույթ են, և ոչ միայն հայ իրականության մեջ: Բնականաբար, դրանց ուսումնասիրությունը պահանջում է բազմապիսի գիտելիքներ ու հմտություն՝ համոզիչ կերպով լուծելու

⁴ Տե՛ս նաև «Եղիշեի «Վարդանանց պատմութեան» նորագույն քննադատը», «Տեղեկագիր» ՍՍՀՄ ԳԱ հայկ. ֆիլիալի (հաս. գիտ.), Երևան, 1943, № 3, էջ 63—98: «Վերջին անգամ Ն. Ակինյանն ու Եղիշեի «Վարդանանց պատմությունը», «Բանբեր Մատենադարանի», № 5, 1960, էջ 527—533 և այլն:

⁵ Ե. Գ. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968:

նրանց առաջացման, զարգացման ու գոյատևման օրինաչափությունները: Եվ ահա, այդ ամենով օժտված հեղինակը հանդամանալից ու լուրջ քննության է ենթարկում սինկրետիզմը, Միհրի կրոնը (միթրաիզմը), գնոստիկականությունն ու գնոստիկյան դպրոցները, բորբորիտների աղանդն ու մծղենությունը, մազդակյան կրոնը, մանիքեությունը, պավլիկյանների ու թոնդրակեցիների աղանդները և այլն, ձեռքի տակ ունենալով մինչև իր գրքի հրապարակ հանելը աղանդավորների մասին գոյություն ունեցող բառացիորեն բոլոր աղբյուրներն ու հետազոտությունները:

Աղանդների և աղանդավորության ուսումնասիրությունը հետախուզողը կարևոր է համարում թե՛ ընդհանուր և թե՛ հայոց պատմության համար: Պատմականորեն ու գիտականորեն մոտենալով դրան, նա ցույց է տալիս, որ ռեալմաթիվ աղանդների և հերձվածների ծագումը քրիստոնեական եկեղեցու ներսում ոչ մի դեպքում չի կարելի պատահական երևույթ համարել: Դրանց առաջացումը նա իմաստավորում է «որպես հեթանոսական աշխարհայացքի վերակենդանացում և արտաքին աշխարհի գաղափարների ներթափանցում, երբեմն նույնիսկ ներխուժում քրիստոնեության մեջ»⁶: Ըստ էության, նա աղանդների գոյությունը դիտում է որպես սոցիալ-քաղաքական երևույթ, հասարակական հարաբերությունների ծնունդ, ճնշման ու հարստահարության հետևանք, դժգոհության ու ապստամբության արտահայտություն: Այս տեսանկյունով էլ նա քննում է աղանդավորական աշխարհայացքի հիմունքները, շարժումների լայնածավալ տարածումը գլխավորապես Արևելքի բոլոր ժողովուրդների և կրոնների մեջ: Փաստորեն հանրագումարի բերելով հարցի շուրջը եղած բոլոր նյութերն ու կարծիքները, նա անաչառորեն գնահատում է յուրաքանչյուրի արժեքը, ցույց տալիս սխալները, համոզիչ կերպով հերքում այն տեսակետները, որոնք ծանրակշիռ չեն, մասնավորապես նրանք, որոնք աղանդավորներին անարդարացիորեն համարում են «վատաբարո քրեական հանցագործներ», հաստատում ու ընդունում պատմականորեն ճիշտ, գիտական բացատրությունները, ճշգրտում փաստերը, առաջադրում իր հայեցակետը, ապացուցում լրացուցիչ նոր վկայություններով՝ սկզբնաղբյուրների մանրակրկիտ քննությամբ ու մեկնությամբ, պատմիչների ու վավերագրերի վրա հենվելով: Աղանդների մասին նրա հետազոտության արժեքն առանձնապես շեշտելի ու նշանակալից է հենց նրանով, որ արդյունք է հեղինակի ոչ միայն գիտական հարուստ փորձի ու կուտակած պաշարի, այլև ստեղծագործական մտքի:

Անշուշտ, այս հոգվածով անհնար է քննել հայագետի ամբողջ վաստակը, սակայն և անհնար է շանդրադառնալ նրա անուրանալի խոշոր ծառայություններին բառարանագիտության ու բառարանագրության, թարգմանության ու լեզվաշինության ասպարեզներում:

Բանիբուն հայագետը խմբագրել է մեր պատմաբանների ու բանասեր գիտնականների գործերը, 1934 թ. սկսած մասնակցել հայ-ռուսերեն երկհատոր բառարանի ստեղծման աշխատանքներին, կազմել և ճշտել է իր բաժինը, նույն ներդրումն ունենալով նաև 1946, 1947 թթ. հայ-ռուսերեն բառարանները լույս ընծայելու գործում: Հետագայում նա իր մեծ լուման է մուծել կազմելու և խմբագրելու 1954—1958 թթ. հրատարակված ռուս—հայերեն բառահատոր բառարանները: Այժմ նա ավարտել է իր աշխատանքը «Ժամանակակից հայոց

⁶ Նույն տեղում, էջ 5:

լեզվի բացատրական բառարանի» հատորների վրա, որոնցից առաջինը արդեն դարձել է հասարակության սեփականությունը: Նրա հմուտ հայերենով հայ ընթերցողն ու գիտական միտքը վայելել է եվրոպացի ու ռուս հեղինակների դեղարվեստական ստեղծագործությունների ու փիլիսոփայական, քաղաքական երկերի թարգմանությունները: Մարքսիզմ-լենինիզմի դասականների գործերը հայ ուսումնասիրողին մատչելի են դարձել, գրեթե առանց բացառության, Երվանդ Տեր-Մինասյանի անմիջական մասնակցությամբ. եղած բոլոր հրատարակություններն անցել են նրա ձեռքով՝ թարգմանվել բնագրից կամ համեմատվել բնագրի հետ, ճշգրտվել, ոճական խմբագրության ենթարկվել:

Զմոռանանք հիշել, որ կան դեռևս բազում այլ հետազոտություններ, որոնք ավարտել է հեղինակը: Զմոռանանք նաև, որ իր գործերի թվի պես մեծ է նաև իր աշակերտների թիվը: Շատերն ունեն գիտական աստիճաններ ու հետազոտություններ, շատերն էլ՝ իրենց աշակերտները: Եվ այդ շատերի մեջ է, որ այսօր էլ դեռ ապրում է ու ստեղծագործում նրանց ուսուցիչ Երվանդ Տեր-Մինասյանը: